**ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի ուղերձը Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա՝ հունիսի 1-ի առիթով**

Ամենաջերմ սիրով ու ամենաբարի ցանկություններով շնորհավորում եմ սյունյաց մանուկներին Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ:

Ամռան առաջին օրը՝ հունիսի 1-ը, աշխարհի շատ երկրներում տոնում են որպես Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օր, որը քաղաքակիրթ մարդկությունը նշում է 1950 թվականից:

Այս օրը ուրախ ու բերկրալի տոն է մոլորակի բոլոր մանուկների համար, նաև՝ հիշեցում հասարակության բոլոր անդամներին, որ անհրաժեշտ է ապահովել երեխաների երջանիկ, ուրախ և անհոգ ապրելու պայմանները: Յուրաքանչյուր երեխայի մեջ կա մի կտոր մեր ներկայից ու հույս՝ ուղղված ապագային: Որքան արժանավայել է ներկան, նույնքան խոստումնալից է ապագան: Հոգատար ու սրտացավ վերաբերմունքը երեխաների նկատմամբ ապահովում է մեր պետականության վաղվա օրը:

Սիրելի փոքրիկներ, եղեք առողջ ու երջանիկ: Թող ձեր մանկությունն անցնի խաղաղության ու սիրո, ուշադրության, պետական ու ծնողական հովանավորության ներքո:

**ՀՀ Սյունիքի մարզպետ**  **Ս. Խաչատրյան**

1 հունիսի 2015թ.